

**«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2012թ-ի 1-ին կիսամյակի
ԶԵԿՈՒՅՑ**

1. Ընկերությունը 2012թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում կատարել է հետևյալ կապիտալ ծրագրերը՝ մասնավորապես՝

<p>Շեն-Ջորջիայի սալիկի սուսինձի արտադրամասի և դրա գործունեության բոլոր ենթակառուցվածքների առկայության և կառուցման պայմաններում Շեն-Ջորջիան 2012թ-ի ապրիլին ձեռք է բերել Թբիլիսիից ոչ հեռու գտնվող ավագի հանք, որտեղի վերամշակված ավագի մանր հատիկայնությամբ ավազը օգտագործվելու է տեղում սալիկի սուսինձի արտադրության համար, իսկ քիչ ավելի խոշորը ներկրվելու է Երևան մայրի բետոնե սալիկների արտադրության համար: Հանքին կից կառուցվում է նաև ավագի լվացման և վերամշակման արտադրամաս:</p>
<p>Ընկերությունը 2012թ-ի ընթացքում կապիտալ վերանորոգել և բացել է նոր խանութ Զեյթուն, Դ. Անհաղթի 8 հասցեում, որտեղ վաճառում է Շեն Դեկոր (Շիրակի 2/2) խանութի ողջ տեսականին: Շեն Գեկորի թվով 4-րդ խանութը Վիտրա թուրքական բրենդով արդեն վերանորոգվում է և կբացվի մինչև հոկտեմբեր: Խանութների վերանորոգման ծախսերը մեծ չեն եղել, սակայն ընկերությունը ընդլայնել է ապրաքատեսականին մոտ 400,000 USD:</p>
<p>Քանի որ աճել է բետոնե բլոկների պահանջարկը, Ընկերությունը Արցախի 49 հասցեում կառուցել և սույն թվականի հոկտեմբերին կշահագործի իր նոր բետոնե բլոկների արտադրության հոսքագիծը: Այդ նպատակով Լատվիաից ձեռք է բերվել 1,200,000 USD արժողությամբ իսպանական հոսքագիծ: Տվյալ տարածքում տեղակայված է բետոնի արտադրության խոշոր գործարան, որը նախատեսվում է վերաշահագործել, ինչպես նաև նախատեսվում է արտադրել հատուկ տեսակի (ջրակայուն, ջերմակայուն և այլն) բետոն և բետոնից արտադրատեսակներ:</p>
<p>Ընկերությունը Շեն Գրուպ ՓԲԸ-ով 2012թ-ի մարտին ձեռք է բերել նոր գիպսի վերամշակման հոսքագիծ, որի մի մասը ձեռք է բերվել ՌԴ /160,000 USD/, իսկ մյուս մասը Պարսկաստանից՝ 70,000 USD արժողությամբ և տեղական շուկայից մնացած այլ դետալներ: Ներկայումս ավարտվել է այդ հոսքագծերի տեղակայման աշխատանքները և նոր սարքավորումը բացի հանքաքարի մանրացումից կատարում է նաև հանքաքարի հարստացման (գիսատար կավի առանձնացումը ոչ պիտանի լեռնային զանգվածից):</p>
<p>2012թ-ի 1-ին եռ-ի ընթացքում Ընկերությունը ձեռք է բերել 60,000 USD արժողությամբ բեռնատար մեքենա կցորդով /Թուրքիայից/, 2 ամբարձիչ 70,000 USD ընդհանուր արժեքով և 1 էքսկավատոր՝ 175,000 Եվրո /Հոլանդիա/, ավագի, կավիճի և գիպսի հանքավայրերում շահագործելու համար, թվով 8 հատ Գ-ագել, Զիլ ավտոմեքենաներ, և մեծ բեռնատարների կցորդներ և այլն:</p>

2. 2012թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի կարևոր դեպքեր, հիմնական ռիսկեր կամ անորոշություններ, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա, իսկ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի համաձայն էական համարվող տեղեկությունը տեղադրված է մեր պաշտոնական կայքում:

Գործ. տնօրեն

Պ. Բաղալյան

Ֆին. տնօրեն - գլխ. հաշվ.

Ի. Սորոկինա

**«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատու անձանց
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն հայտարարությունը տրվում է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի 2012թ-ի 1-ին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունների կապակցությամբ, որի նպատակն է կարծիք արտահայտել, թե արդյոք Ընկերության ֆինանսական հաշվետվությունները տալիս են ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը համաձայն՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և միջազգային ստանդարտների ուղեցույցներըների և այլ համապատասխան իրավական ակտերի:

Մենք ընդունում ենք մեր պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացման համար:

Հ/Հ	Անուն ազգանուն	Պաշտոնը և այլ նկարագրություն	Պատասխանատու անձի պատասխանատվության շրջանակը	Պատասխանատու անձի ստորագրությունը
1	Բեգլարյան Սամվել	Տնօրենների խորհրդի նախագահ 99.91% բաժնետոմսերի սեփականատեր	Բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
2	Բաղալյան Պապ	Տնօրենների խորհրդի անդամ, գործադիր տնօրեն	Տնօրենների խորհրդի և ընթացիկ գործունեության ղեկավարման օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
3	Դավթյան Իրինա	Տնօրենների խորհրդի անդամ	Տնօրենների խորհրդի օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
4	Սորոկինա Իրինա	Ֆինանսական տնօրեն	Ընթացիկ գործունեության իրականացման օրենսդրությամբ, կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն	
5	Վանեսյան Անահիտ	Գլխավոր հաշվապահ	Ընթացիկ գործունեության իրականացման կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն	
6	Բալասանյան Արմեն	Ներքին աուդիտոր	Ընթացիկ գործունեության իրականացման կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն	

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

2012թ-ի 1-ին կիսամյակի հաշվետվություն

«ՇԵՆ – ԿՈՆՑԵՆՆ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

թողարկողի անվանումը, (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպական - իրավական ձևը

0043, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2, հեռ. (37410) 46-01-01,

էլ. փոստ՝ shen@shenconcern.com, ինտ. կայքը՝ www.shenconcern.com

(թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն և կապի միջոցները)

N 2, 31.08.2012թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ **2 թողարկմամբ անվանական գեղչատոկոսային պարտատոմս**

արժեթղթերի քանակը՝

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Պապ Բաղայան (անուն, ազգանուն)	գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Իրինա Մորոկինա (անուն, ազգանուն)	ֆինանսական տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Պապ Բաղայան (անուն, ազգանուն)	գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
----------------------------------	-----------------------------	------------------	-----------

Կ.Տ.

**Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան

2012թ-ի օգոստոսի 31-ին մեզ չհաջողվեց ներկայացնել Էլեկտրոնային եղանակով և առաջնորդվելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 46 կետով նույն օրը Ձեզ ենք ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի 2012թ-ի 1-ին կիսամյակի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակված թղթային և Էլեկտրոնային կրիչի վրա ձայնագրված տարբերակներով: Էլեկտրոնային ուղարկելու հնարավորություն լինելու դեպքում անմիջապես կուղարկենք նաև այդ տարբերակով:

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան